

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----- 2020թ.

N----Ն

### Ո Ր Ո Շ Մ Ա Ն

#### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 182-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով՝

«1.1.1. Սահմանել որ, 2020 թվականի օգոստոսի 4-ին Բեյրութ քաղաքում տեղի ունեցած ավերիչ պայթյունի հետևանքով Լիբանանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով Երևան քաղաք ժամանած լիբանանահայերի և բացառապես նրանց հիմնադրամար և մասնակցությամբ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարների դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ գրոյական դրույքաչափի կիրառմամբ, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կայանելու և հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար սահմանված տեղական վճարների»:

2) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2 կետով՝

«1.2.2. Սահմանել որ, 2020 թվականի օգոստոսի 4-ին Բեյրութ քաղաքում տեղի ունեցած ավերիչ պայթյունի հետևանքով Լիբանանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով Երևան քաղաք ժամանած լիբանանահայերի և բացառապես նրանց հիմնադրամար և մասնակցությամբ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 2020 թվականի համար սահմանված ավտոտրանսպորտային միջոցը կայանելու և հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար սահմանված տեղական վճարների նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ ազատելով հաշվարկված տեղական վճարի վճարումից»:

3) Որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5)-րդ ենթակետով՝

«5) Սույն որոշման 1□1 կետում նշված դեպքերում՝

աժ ֆիզիկական անձանց դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի, իսկ անչափահաս լինելու դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են ծառայությունից օգտվողի Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, իսկ անչափահաս լինելու դեպքում՝ Լիբանանի Հանրապետության կողմից տրված անձնագրի կամ ծննդյան վկայականի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը և օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը,

բժ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումը, որին կցվում են իրավաբանական անձի հիմնադրի (հիմնադիրների) և մասնակիցների կամ անհատ ձեռնարկատիրոջ Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը և ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման մասին միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք»:

4) Որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6)-րդ ենթակետով □

«6) Սույն որոշման 1□2 կետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի դիմումը, որին կցվում են ծառայությունից օգտվողի Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, վարորդական վկայականի և համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի կամ կցորդի տեխնիկական անձնագրի պատճենները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի օգոստոսի 4-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ**

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **34**-րդ հոդվածի **1**-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **16**-րդ հոդվածի **1**-ին և **3**-րդ մասերի համաձայն՝

«**1.** Արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

**3.** Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը»:

**2020** թվականի օգոստոսի **4**-ին Երևանի քույր քաղաք, հայաշատ Բեյրութ քաղաքի նավահանգստում տեղի ունեցած խոշոր պայթյունը բերել է մեծ մարդկային և նյութական կորուստներ: Բեյրութը հայտարարվել է աղետի գոտի, քաղաքում հայտարարվել է արտակարգ դրություն: Նշված արհավիրքից հետո խոցելի վիճակում են հայտնվել նաև բազմաթիվ լիբանանահայեր՝ կորցնելով իրենց տները և ապրուստի միջոցները: Ուստի՝ ստեղծված պայմաններում Երևան տեղափոխված կամ տեղափոխվելու մտադրություն ունեցող լիբանանահայերի՝ մայրաքաղաքում հաստատվելուն աջակցելու և նրանց վրա ծանրացած բեռը նվազեցնելու նպատակով նրանց և նրանց կողմից հիմնադրված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար սահմանվում են **2020** թվականի համար սահմանված բոլոր տեղական վճարների նկատմամբ արտոնություններ՝ գրոյական դրույքաչափի կիրառմամբ կամ ազատելով հաշվարկված տեղական վճարի վճարումից:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ**

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ  
ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի N **182**-Ն որոշման մեջ  
լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման  
առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ  
ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի դեկտեմբերի **25**-ի N **182**-Ն որոշման մեջ  
լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ  
Երևան քաղաքի **2020** թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի մասով փոփոխություններ  
չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ**

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**